Հաստատված է՝
Տնօրինության 25.06.2026թ.-ի
Թիվ DEC 12-55 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է մտնում 09.07.2026թ. ժամը 09:00-ից:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք www.fastbank.am հասցեով, դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Կոնտակտային կենտրոն՝ (+374 10) 510 000 հեռախոսահամարով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Հաճախորդ	Իրավաբանական անձ , Անհատ ձեռնարկատեր	
Բանկային հաշվի բացում և սպասարկում*	AMD/USD/EUR/RU/GBP/CNY/GEL/AED/KZT	սակագին չի կիրառվում
Տարեկան սպասարկում		սակագին չի կիրառվում
Նվազագույն մնացորդ		չի կիրառվում
Հաշվի բացման ժամկետ	Հաշվի բացման դիմումը ներկայացնելու օրվա ընթացքում	
Կանխիկով գործարքներ [1]		
Կանխիկ միջոցների մուտքագրում հաշվին մասնաճյուղիդրամարկղում [1]	AMD/ GEL/AED	սակագին չի կիրառվում
	USD	- մինչև 1996թ.-ը թողարկված ԱՄՆ դոլարի թղթադրամներ չեն ընդունվում -1996թ.-ից մինչև 2006թ.-ի թողարկման 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամները՝ - Մեկ հաճախորդի կողմից օրական մինչև 1000 ԱՄՆ դոլար՝ սակագին չի կիրառվում - 1000 ԱՄՆ դոլարից ավել գումարի՝ 1% - այլ թղթադրամի դեպքում սակագին չի սահմանվում
	EUR	- 500 եվրո անվանական արժեքով թղթադրամի դեպքում 2% - այլ թղթադրամի դեպքում սակագին չի կիրառվում
	RUB	~~2% անվճար, եթե մուտքագրվում է ավանդ ներդրելու նպատակով[6]~~ 5%
	GBP	5%
Միջոցների կանխիկացում [2]	AMD	0.25 % նվազագույնը 1000 ՀՀ դրամ
	USD/EUR	1% նվազագույնը 1000 ՀՀ դրամ
	RU/ GEL/AED	Սակագին չի կիրառվում
	GBP	5% նվազագույնը 1000 ՀՀ դրամ
Հնամաշ թղթադրամների ընդունում և փոխանակում	Համաձայն Բանկում գործող «Այլ ծառայությունների սակագների»	
Փոխանցումներ		
Հանձնարարականը մասնաճյուղում ներկայացնելու դեպքում		
Ներբանկային փոխանցումներ[3]	AMD/USD/EUR/RU/GBP/CNY/GEL/AED/KZT	200 ՀՀ դրամ

Միջբանկային փոխանցումներ ՀՀ տարածքում	AMD (այդ թվում ՀՀ պետական և տեղական բյուջե) /USD/EUR	200 ՀՀ դրամ
Հանձնարարականը Ինտերնետ/Մոբայլ բանկինգով ներկայացնելու դեպքում	սակագին չի կիրառվում	
Անճշտությունների ուղղում վճարման հանձնարարականի տվյալներում հաճախորդի դիմումի համաձայն	սակագին չի սահմանվում (SWIFT համակարգով փոխանցման դեպքում՝ համաձայն «Ֆիզիկական և իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից արտարժույթային միջազգային փոխանցումների իրականացման պայմանների և սակագների»)	
Գործող հաշվի վերաբերյալ քաղվածքների տրամադրումբանկի մասնաճյուղում	սակագին չի կիրառվում	
Փակված հաշվի վերաբերյալ քաղվածքի տրամադրում բանկի մասնաճյուղում	1000 ՀՀ դրամ [4]	

Հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան (պարզ) տոկոսադրույք և տոկոսային եկամտաբերություն [5]	Արժույթ	Տարեկան (պարզ) տոկոսադրույք	APY (տոկոսային եկամտաբերություն)
	AMD	4%	4.07%
	USD	0.5%	0.5%
	EUR	0.1%	0.1%
	RU	0.5%	0.5%
	GBP/CNY/GEL/AED/KZT	0%	0%
Չնվազող մնացորդ[Z6]	Եթե հաճախորդը Բանկում ունի գործող ՊՈՍ տերմինալ և ներառված է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 09.02.2026թ.-ի թիվ 27-Ն որոշման հավելված 1-ով սահմանված Արքա վճարային համակարգի կանոնների համաձայն վաճառակետի տեսակի կոդ (Merchant category code) ունեցող տնտեսվարողների ցանկում, ապա տվյալ ՊՈՍ տերմինալի հաշվին անհրաժեշտ է ապահովել չնվազող մնացորդ՝ յուրաքանչյուր ՊՈՍ տերմինալի համար համապատասխանաբար՝ - 4600 (չորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ Երևան քաղաքում տեղադրված ՊՈՍ տերմինալի համար - 3000 (երեք հազար) ՀՀ դրամ՝ ՀՀ մարզերի քաղաքներում տեղադրված ՊՈՍ տերմինալի համար, - 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ՝ ՀՀ գյուղերում տեղադրված ՊՈՍ տերմինալի համար:		

ℹ Ծանոթություն

*Կուսակցություն (ԿՍ) կազմակերպաիրավական տեսակ ունեցող հաճախորդների հաշվի բացման համար սահմանված է 100,000 ՀՀ դրամ միանվագ միջնորդավճար:

[1] Սակագնի կիրառման ժամանակ հիմք է ընդունվում տվյալ պահին գործող ՀՀ ԿԲ փոխարժեքը: Չինական յուան (CNY) և Ղազախական տենգե (KZT) արժույթով հաշիվներով իրականացվում են միայն անկանխիկ գործարքներ, կանխիկ գործարքներ չեն իրականացվում:

[2] Սակագինը չի տարածվում՝

- ժամկետային ավանդի գումարի կանխիկացման դեպքում, բացառությամբ, եթե ժամկետային ավանդի պայմանագիրը լուծվել է ժամկետային ավանդը ներդնելուց հետո մինչև 30 օրվա ընթացքում:
- Պարտատոմսերի կանխիկացման դեպքում,
- Ժամկետային ավանդի և պարտատոմսերի համար վճարված տոկոսագումարի կանխիկացման դեպքում:

[3] Փոխանցման հաշվի արժույթը տարբեր լինելու դեպքում իրականացվում է փոխարկում Բանկի սահմանած փոխարժեքով:

- Ներբանկային փոխանցումը իրականացվում է անմիջապես,
- Մինչև ժամը 15:30 ընդունված միջբանկային փոխանցումները իրականացվում են միևնույն բանկային օրը: Ժամը 15:30-ից հետո կատարված փոխանցումները իրականացվում են հաջորդ աշխատանքային օրը: Փոխանցվող գումարի ելքագրումը հաշվից իրականացվում է անմիջապես:

[4] Ներառյալ ԱԱՀ

[5] Տոկոսագումարը կապիտալացվում և վճարվում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսի 15-ը:

~~[6] Այն դեպքում, երբ ավանդը խզվում է 30 օր ժամկետից շուտ, կիրառվում է 2% կանխիկ մուտքի սակագինը:~~

[~~7~~6] Սույն սակագները տարածվում են Բանկի գործող հաճախորդների վրա 17/03/2026թ.-ից, իսկ նոր հաճախորդների վրա՝ 01/03/2026թ.-ից:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ		
Հաճախորդ	Ֆիզիկական անձ,Անհատ ձեռնարկատեր, Իրավաբանական անձ	
Հաշվի նկարագիր	Կառուցապատողի հատուկ հաշիվը նախատեսված է Գնորդների հետ կնքված Գնման իրավունքի պայմանագրերի հիման վրա կառուցվող շենքում բնակարանների և ոչ բնակելի տարածքների, անհատական բնակելի տների ձեռքբերման նպատակով Գնորդների կողմից կատարվող կանխավճարների և ձեռքբերմանն ուղղված այլ վճարների ստացման համար, ընդ որում կառուցապատողի կողմից կառուցվող յուրաքանչյուր շենքի համար բացվում է առանձին Հատուկ հաշիվ: Կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները Բանկի կողմից արգելադրվում են և հասանելի չեն Կառուցապատողին օգտագործման համար բացառությամբ՝ Կառուցապատողի հատուկ հաշվի պայմանագրով, Գնման իրավունքի պայմանագրով և օրենքով սահմանված դեպքերի:	
Հատուկ հաշվի բացում և սպասարկում	ՀՀ դրամ	յուրաքանչյուր մինչև 3-րդ հաշվի բացումը՝ 50.000 դրամ
Տարեկան սպասարկում	ՀՀ դրամ	սակագին չի կիրառվում
Փոխանցումներ		
Ներբանկային փոխանցումներ բանկային հաշվից	ՀՀ դրամ	սակագին չի կիրառվում
Անճշտությունների ուղղում վճարման հանձնարարականի տվյալներում հաճախորդի դիմումի համաձայն	սակագին չի կիրառվում	
Գործող հաշվի վերաբերյալ քաղվածքների տրամադրում բանկի մասնաճյուղում	սակագին չի կիրառվում	
Փակված հաշվի վերաբերյալ քաղվածքի տրամադրում բանկի մասնաճյուղում	1 000 ՀՀ դրամ [1]	
Հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան (պարզ) տոկոսադրույք[2]	1%* - 6.5% (* Ծրագրային հիփոթեքային վարկերի համար բացված հատուկ հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան (պարզ) տոկոսադրույք՝ 1%)	
Տարեկան տոկոսային եկամտաբերություն (APY)	1% - 6.7%	

! Ծանոթություն

[1]Ներառյալ ԱԱՀ

[2] Տոկոսագումարը հաշվարկվում է ամսական հաճախականությամբ և վճարվում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսի 15-ը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ և ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

1. Բանկային հաշիվները բացվում են ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի, Չինական յուան, Վրացական լարի, Ֆունտ ստերլինգ, ԱՄԷ դիրհամ և Ղազախական տենգե արժույթներով:
2. Բանկային հաշիվները բացվում են անժամկետ:
3. Բանկային հաշիվները սպասարկվում են համաձայն Բանկում գործող «Ընթացիկ բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների» (այսուհետ՝ Սակագներ), որը ներկայացվում է սույն տեղեկատվական ամփոփագրին կից Հավելված 1-ում:
4. Հաշվի օրական մնացորդի նկատմամբ Բանկը կարող է հաշվեգրել տոկոս՝ տվյալ ժամանակահատվածի համար Բանկում գործող Սակագներով և պայմանագրով սահմանված չափով, ընդ որում՝ օրական մնացորդ է համարվում տվյալ գործառնական օրվա ավարտին Հաշվի փաստացի մնացորդը: Հաշվում առկա գումարի վրա տոկոսները հաշվարկվում են գումարը Բանկ

մուտք լինելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Հաճախորդի բանկային հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար՝ 1/366 հարաբերակցությամբ: Տոկոսները հաշվարկվում են դրամական միջոցների չօգտագործված փաստացի մնացորդի նկատմամբ:

5. Եթե Բանկում ունեցած հաշիվների մնացորդների դիմաց հաշվեգրվում են տոկոսներ, ապա տոկոսագումարը հաշվեգրվում է յուրաքանչյուր ամիս: Հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են բանկային հաշվի արժույթով և կապիտալացվում են (փոխանցվում են) հաճախորդի նույն հաշվեհամարին մինչև հաջորդ ամսվա 15-ը:

6. Բանկն իրավունք ունի փոփոխելու բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7. Բանկն իրավունք ունի հաճախորդի պահանջով վերջինիս բանկային հաշվից կանխիկ դրամական միջոցների տրամադրումն իրականացնել հաճախորդից համապատասխան հանձնարարականը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը (բացառությամբ՝ շաբաթ և կիրակի օրերի), եթե պահանջվող գումարը գերազանցում է 5 մլն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

8. Այն դեպքում երբ որևէ գործարքի կատարման շրջանակում գործարքի արդյունքում ձևավորված կանխիկ միջոցները հաճախորդը ցանկանում է ստանալ 50 000 և 100 000 ՀՀ դրամ անվանական արժեքով դրամանիշներով, ապա պարտավոր է Բանկին տեղեկացնել այս մասին առնվազն 1 աշխատանքային օր առաջ՝ նշելով դրամանիշների անհրաժեշտ քանակը:

9. Բանկի սահմանած սակագների կամ այլ պայմանների կիրառման հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը կարող է նվազել:

10. Կանոններում, Պայմաններում և Սակագներում փոփոխությունների դեպքում, Բանկը պարտավորվում է փոփոխություններն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ ծանուցել Հաճախորդին դրանց վերաբերյալ՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով: Տարեկան տոկոսային եկամտաբերության վրա ազդեցություն ունեցող փոփոխությունների դեպքում, Բանկը պարտավոր է ծանուցել Հաճախորդին դրանց վերաբերյալ՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:

11. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հարկման կարգը, չափը և մյուս առանձնահատկությունները կարգավորվում են ՀՀ հարկային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

12. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել բանկային հաշվի սպասարկումը և փակել հաշիվը առանց Հաճախորդի համաձայնության՝

12.1. Եթե Հաճախորդը թույլ է տվել Կանոնների և Սակագների, ինչպես նաև Բանկի նկատմամբ ստանձնած այլ պարտավորությունների խախտում,

12.2. Եթե հիմքեր կան ենթադրելու, որ հաշիվն օգտագործվում է որևէ անօրինական նպատակով,

12.3. Եթե Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն բավականացնում հաշիվը սպասարկելու համար Սակագներով սահմանված վճարները գանձելու համար կամ զրոյական մնացորդով հաշվով չեն իրականացվել որևիցե գործարքներ: Սույն կետի իմաստով հաշվով գործառնություններ չեն համարվում Բանկի կողմից հաշվի սպասարկման վճարի կամ Բանկի առջև Հաճախորդի այլ պարտավորությունների դիմաց դրամական միջոցների գանձման, ինչպես նաև դատարանի վճռի հիման վրա հաշվից միջոցների բռնագանձման դեպքերը:

13. Բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարը Հաճախորդի Հաշվին կրեդիտագրվելու մասին Բանկը Հաճախորդին տեղեկացնում է քաղվածքի տրամադրման միջոցով՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով նախատեսված քաղվածքի տրամադրման պայմանների և ժամկետների համաձայն: Հաշվի պայմանագրի լուծումը հիմք է Հաճախորդի Հաշիվը փակելու համար: Հաշվում առկա դրամական միջոցների մնացորդը տրվում է Հաճախորդին կամ Հաճախորդի ցուցումով փոխանցվում է այլ Հաշվի՝ Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ քան 7 (յոթ) օրվա ընթացքում:

14. Հաճախորդն ինքնուրույն տնօրինում է իր Հաշվում առկա դրամական միջոցները: Բանկն իրավունք չունի Հաշվում եղած

դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները սահմանափակել, բացի օրենքով, «Ֆասթ Բանկ» ՓԲԸ «Բանկային և ավանդային հաշիվների բացման և վարման (սպասարկման) կանոններով» և համապատասխան պայմանագրերով նախատեսված դեպքերի:

15. Հաշվով գրավոր գործարքներն իրականացվում են Հաճախորդի կողմից կամ անունից պատշաճ կերպով լրացված Վճարման հանձնարարականների հիման վրա: Հաշվին կանխիկ դրամական միջոցների մուտքագրումները և/կամ Հաշվից ելքագրումներն իրականացվում են մուտքային/ելքային դրամարկղային անդորրագրերի հիման վրա: Հաճախորդի կողմից նշված անդորրագրերի վրա դրված ստորագրությունը հանդիսանում է հաշվով կատարված գործառնության հավաստիացում:

16. Բանկը Հաճախորդի հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով:

17. Եթե Հաշվին փոխանցվել են միջոցներ, որոնք տարբերվում են Հաշվի արժույթից, ապա Բանկը Հաշվին մուտքագրում է դրան համարժեք գումար՝ տվյալ հաշվի արժույթով՝ հաշվարկված Բանկի կողմից անկանխիկ գործարքների համար տվյալ գործառնության իրականացման պահի դրությամբ գործող փոխարժեքով Բանկը իրականացնում է նաև Հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնություններ: Հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվին դրամական միջոցների մուտքի և ելքի դեպքում փոխարկման փոխարժեքը Բանկի կողմից սահմանվում է փոխարկման գործառնության իրականացման պահի դրությամբ Բանկի արժութային փոխանակման գործառնությունների գործող փոխարժեքով՝ փոխարկումը կատարվում է.

17.1. Արժութային հաշվից տարանցիկ հաշվին փոխանցվող գումարների փոխարկման դեպքում՝ գործառնության իրականացման պահի դրությամբ գործող Բանկի անկանխիկ արժույթային փոխանակման գործառնությունների փոխարժեքով,

17.2. Տարանցիկ հաշվից գործարքը կատարելու համար փոխարկման դեպքում՝ գործառնության իրականացման պահի դրությամբ գործող՝ Բանկի անկանխիկ արժութային փոխանակման գործառնությունների փոխարժեքով:

18. Հաշիվը տնօրինելու իրավունքը կարող է սահմանափակվել կամ հաշվից միջոցները բռնագանձվել առանց հաճախորդին նախապես տեղեկացնելու՝ ՀՀ դատական և այլ իրավասու մարմինների որոշմամբ, ինչպես նաև Բանկի կողմից, եթե հաճախորդը խախտում է Բանկի առջև ստանձնած վարկային կամ այլ պարտավորությունները: Հաշվի ապօրինի օգտագործման դեպքերում անհրաժեշտ է տեղեկացնել Բանկին՝ զանգահարելով (+374 10) 51 00 00 շուրջօրյա հեռախոսահամարով, կամ դիմելով Բանկին՝ Բանկում գործող և պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված կապի այլ միջոցներով: Ապօրինի օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում հաշիվը կարգելափակվի և Բանկը Հաճախորդի դիմումի հիման վրա կուսումնասիրի գործարքի մանրամասները և, անհրաժեշտության դեպքում, կսկսի գործարքի բողոքարկման գործընթացը:

19. Հաճախորդը կարող է փակել բանկային հաշիվը Կանոններով սահմանված դեպքերում, Բանկի կողմից հաշվի փակման դիմումը ներկայացնելու օրը: Տվյալ դեպքում Հաճախորդը կարող է ստանալ հաշվում առկա դրամական միջոցները կանխիկ կամ անկանխիկ եղանակով փոխանցել դրանք այլ հաշվի՝ վճարելով Սակագներով սահմանված միջնորդավճարը:

20. Հաճախորդի կողմից ներկայացված պայմանագիրը/երը լուծելու և Հաշիվը փակելու վերաբերյալ դիմումը Բանկի կողմից ենթակա չէ կատարման, քանի դեռ չեն վերացել Հաշվով գործառնությունների չդադարեցման համար հիմք հանդիսացող հանգամանքները:

21. Հաշիվները ենթակա չեն փակման եթե՝

21.1. Հաճախորդը Բանկի նկատմամբ ունի պարտավորություն, և/կամ այլ Հաշիվներով կատարվում են Հաճախորդի գործող ժամկետային ավանդային պայմանագրով ավանդի տոկոսագումարների վճարման և այլ ավանդային հաշվով գործարքներ, և/կամ

21.2. Մնացորդ պարունակող Հաճախորդի հաշվի վրա առկա է արգելանք, և/կամ

21.3. Հաշիվը ծանրաբեռնված է գրավով և չկա հաշիվը փակելու վերաբերյալ գրավառուի համաձայնությունը:

21.4. Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

22. Հաշվի ապօրինի օգտագործման դեպքերում անհրաժեշտ է տեղեկացնել Բանկին՝ զանգահարելով (+37410) 510 000 շուրջօրյա հեռախոսահամարով, կամ դիմելով Բանկին՝ Բանկում գործող և պաշտոնական ինտերնետային կայքում

հրապարակված կապի այլ միջոցներով: Ապօրինի օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում հաշիվը կարգելափակվի և Բանկը Հաճախորդի դիմումի հիման վրա կուսումնասիրի գործարքի մանրամասները և, անհրաժեշտության դեպքում, կսկսի գործարքի բողոքարկման գործընթացը:

23. Սույն ամփոփագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, «Ֆասթ Բանկ» ՓԲԸ բանկային և ավանդային հաշիվների բացման և վարման (սպասարկման) կանոններով և հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

24. Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

25. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

26. «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ**...:»

27. APY՝ տվյալ ավանդատեսակի համար հաշվարկված ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է: APY ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում: Հաշվարկվում է համաձայն ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգի:

28. Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը տոկոսագումարների կանոնավոր կապիտալացումների դեպքում հնարավոր է հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$APY=(1+r/n)^{n}-1,$$

որտեղ՝

APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:
r - տարեկան պարզ տոկոսադրույքն է:
n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Օրինակ ՝ «Ժամկետային ավանդ՝ տոկոսագումարների ամսական կապիտալացմամբ».
Ենթադրենք առաջարկվում է ավանդատեսակ հետևյալ պայմաններով՝

ա. Ավանդի գործողության ժամկետ՝ 1 տարի (365 օր),
բ. Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 7%,
գ. Տոկոսների կապիտալացումների հաճախականությունը ամսական՝ տարվա ընթացքում 12 անգամ, յուրաքանչյուր ամսվաժամանակահատվածի վերջում:

Ելնելով վերոնշյալ օրինակի պայմաններից և օգտվելով բանաձևից՝ կստանանք տարեկան տոկոսային եկամտաբերության չափը.

$APY = (1 + 0.07/12)^{12} - 1$, որտեղից՝
$APY = 0.072290 * 100 = 7.23\%$

29. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի նկատմամբ ունեցած իր բողոք-

պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին:

30. **Տեղեկացնում ենք,** որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց գույքային չի գերազանցում 100 000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

31. Անհատ ձեռնարկատիրոջ ավանդը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՄՆ ԿԱՐԳԸ

Ավանդի արժույթային կառուցվածքը	միայն դրամային ավանդի դեպքում	միայն արտարժույթային ավանդի դեպքում	և՛ դրամային և՛ արտարժութային ավանդի դեպքում	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոնՀՀ դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀդրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)

Ծառայության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ www.fastbank.am կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն (+37410) 510000 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ